7834

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար
Հակոբ Սիմիդյան

«08» 05 2023թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 0076-23

Ձեռնարկողը՝ ***«ՇԱՄԱԽՅԱՆ» ՍՊԸ***
Դիլիջան, Ե.Շամախյան 1/2

Գործունեությունը՝ ***Դիլիջան համայնքի Շամախյան 1/2 հասցեում բնակելի շենքի կառուցման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ***
Տավուշի մարզ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պարտականությունները կատարող՝ Խաչիկ Մարտիրոսյան

Առդիր եզրակացությունը՝ 7 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 0076-23

«08» 05 **2023թ.**

Տավուշի մարզի Դիլիջան համայնքի Շամախյան 1/2 հասցեում նախատեսվող բնակելի շենքի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ

Ձեռնարկող՝	«ՇԱՄԱԽՅԱՆ» ՍՊԸ
Փաստաթղթի տեսակը՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ
Գործունեությունը՝	«Գ» կատեգորիա
Տեղադրման վայրը՝	ՀՀ Տավուշի մարզ,Դիլիջան, Շամախյան փողոց 1/2 հասցե

Ներածական մաս. «ՇԱՄԱԽՅԱՆ» ՍՊ ընկերությունը /այսուհետ՝ Ընկերություն/ նախատեսում է Տավուշի մարզի Դիլիջան համայնքի Շամախյան փողոց 1/2 հասցեում կառուցել բնակելի շենք:

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի, 6-րդ մասի, 7)-րդ կետի, «ա.» ենթակետի ներկայացված գործունեությունը դասակարգվում է «Գ» կատեգորիայի գործունեության տեսակների ցանկում և ենթակա է շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության:

Նախատեսվող գործունեության նախագծային աշխատանքների համար հիմք է հանդիսացել պատվիրատուի հայտը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականը՝ N 11112022-11-0026, /ծածկագիրը՝ 11-003-0040-0090/, Դիլիջանի համայնքապետարանի կողմից 29.12.2022թ. տրված N Ա1-193 նախագծման թույլտվությունը /ճարտարապետահատակագծային առաջադրանք/: Հողամասի նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի, գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝բնակելի կառուցապատման, գրանցված իրավունքի տեսակը՝ սեփականություն: Բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի կառուցապատման ենթակա հողամասի ընդհանուր մակերեսը կազմում է 1.36626 հա:

Նկարագրական մաս. Նախատեսվող գործունեության նպատակն է կառուցել բնակելի համալիր: Նախագծվող շենքը գտնվում է Տավուշի մարզի Դիլիջան համայնքում՝ Ե.Շամախյան փողոցի 1/2 հասցեում: Շենքը տեղակայված է նախկին հացի գործարանի տարածքում լրացնելով այն և ստեղծելով բնակելի համալիր:

Նախագծվող շենքը բաղկացած է 6 հարկից, որի նկուղային հարկը ավտոկայանատեղիի հետ մեկ նիշում է գտնվում: Շենքը ունի 34 բնակարան, որից երկուսը տանիքի վրա գտնվող պենթհաուսներ են: Առաջին հարկի հատակագիծը կրկնվում է նաև չորրորդ հարկի համար ինչպես երկրորդ և երրորդ հարկերինը: Շենքը առաջին հարկում ունի երկու աստիճանավանդակ, երկու գլխավոր մուտք, երկու էվակուացիոն ելքի համար նախատեսված դռներ: Նկուղային հարկում տեղակայված են բնակարանների համար նախատեսված պահեստային սենյակներ, խոհանոց, ադմինիստրացիայի սենյակ, պատսպարան, տեխնիկական սենյակ և ավտոկայանատեղի: Բոլոր հարկերը ունեն 8 բնակարան բացի տանիքի հարկից:

Ավտոկայանատեղին նախատեսվում է բացօթյա, բայց բետոնե ծածկով՝ տեղումներից պաշպանման համար: Ծածկը նախատեսվում է նաև շահագործել որպես հանգստի զոնա՝ խոտածածկ և ռետինե մակերևույթներով: Զրոյական նիշում մակերեսը կազմում է 1380քմ:
Հողամասի ընդհանուր մակերեսը՝ 13662.6 քմ
-Վերակառուցվող բնակելի մասնաշենքեր 1.1, 1.2, 1.3-5190քմ,38 %;
-Նախատեսվող բնակելի շենքի կառուցապատման մակերես-914քմ,6.7 %;
-Նախատեսվող կիսանկուղային ավտոկայանատեղիի կառուցապատման մակերես1380քմ,10.1 %
- Անջրանցիկ մակերևույթների մակերես-678.6, 4.07 %,
-Կանաչապատման մակերես-5500, 40.25 %
Ավտոկայանատեղեր ՝ 50 հատ, բնակարանների քանակը՝ 104 հատ :
Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է տարածքը կանաչապատել և բարեկարգել: Կանաչապատումը իրականացվելու է տարածաշրջանին բնորոշ ծառատեսակներով և բուսականությամբ: Նախատեսվող գործունեությունը իրենից ներկայացնում է ժամանակակից լուծումներով և նյութերով իրականացվող շինություններ: Այն ներդաշնակ է շրջակա կառույցներին տվյալ միջավայրում և չի հանդիսանում վիզուալ տեսադաշտի խոչնդոտ:

Սպիտակի երկրաշարժից հետո, Հանրապետության շատ տարածքներում, այդ թվում նաև ուսումնասիրվող տեղամասում, կատարվել են սեյսմոշրջանացման աշխատանքներ, որոնց հիման վրա տվյալ տեղամասի սեյսմիկ ֆոնային արժեքը որոշված է 9 բալ (0.4g):

Նախատեսվող գործունեության տարածքում բնության և պատմամշակույթային հուշարձաններ չկան:

«Դիլիջան» ազգային պարկի տարածքում հանդիպում են փափկամարմինների 69 և հոդվածոտանիների 143 տեսակներ: Վերջիններս պատկանում են միջատների դասին: Նշված տեսակներից 7-ը Հայաստանի էնդեմիկներ են: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցանկում ընդգրկված են 3 տեսակներ, որոնք հանդիպում են «Դիլիջան» ազգային պարկի տարածքում: Բացահայտվել են սողունների 19 տեսակներ, կաթնասունների 49 տեսակներ: «Դիլիջան» ազգային պարկի և դրա պահպանական գոտու տարածքներում ֆլորան ընդգրկում է անոթավոր բույսերի 1200 տեսակ, որից 977 տեսակը աճում է պարկի տարածքում: Դրանցից 51-ը ծառատեսակներ են, 47-ը՝ թփեր, 696-ը՝ բազմամյա խոտաբույսեր, 176-ը միամյա և երկամյա բույսեր, 7-ը մակաբույծներ: Նշված տեսակներից 7-ը հանդիսանում են Հայաստանի էնդեմիկներ: Գործունեության տարածքը ենթարկվել է անթրոպոգեն ազդեցությունների, քանի որ այն բազմակի կառուցապատված է, ինչպես նաև տարածքում եղել է հացի գործարան : Բուն տարածքում ՀՀ բույսերի և կենդանիների Կարմիր գրքերում գրանցված բուսատեսակներ կամ կենդանատեսակներ չկան:

Շինարարության նորմատիվ տևողությունը որոշվել է համաձայն նորմերի, հաշվի առնելով օբյեկտի նշանակությունը, կոնստրուկտիվ բնութագիրը, ընդհանուր մակերեսը: Օբյեկտի ընդհանուր կոմպլեքսի շինարարության նորմատիվ տևողությունը ծրագրվում է 15 ամիս շինարարական աշխատանքների կատարման համար թույլատրման տրամադրման օրվանից:

Շինարարության իրականացման որակի չափանիշները հսկվելու են տեխնիկական հսկողություն իրականացնող մարմնի կողմից:

Շինհրապարակը կազմակերպելիս պետք է ղեկավարվել ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի կողմից տրված հրահանգներով:

Հետիոտների անվտանգությունը ապահովելու նպատակով շինհրապարակը անհրաժեշտ է ցանկապատել թիթեղով, մարդկանց անցման հատվածներում անվտանգության նկատառումներով պայմանավորված նախատեսել թիթեղյա ծածկոց:

Հողային աշխատանքների իրականացման ընթացքում պայթեցման աշխատանքներ չեն նախատեսվում: Նոր կառուցապատվող տարածքների շինարարական աշխատանքների

արդյունքում տեղի կունենա հողի բերրի շերտերի մասնակի վնասում (կառուցման փուլում), հողային զանգվածների փորման, հանման և տեղափոխման հետ կապված փոշու արտանետումներ, շինարարական տեխնիկայի շահագործման հետևանքով առաջացած այրման արգասիքներ և աղմուկ: Ազդեցությունների նվազեցումը կարելի է ապահովել իրականացնելով մի շարք բնապահպանական միջոցառումներ և կազմակերպելով աշխատանքների մոնիթորինգ: Հողածածկին պատճառված վնասները նվազագույնին հասցնելու նպատակով նախատեսված է իրականացնել հետևյալ միջոցառումները՝ շինարարության ընթացքում տարածքի բուսահողը հանվելու և կույտավորվելու է պաշտպանված վայրերում, հետագայում այն օգտագործվելու է տեղանքի բարեկարգման համար, ապահովելու են անհրաժեշտ պայմաններ, որպեսզի հանված բուսահողը չխառնվի գրունտի հետ և չաղտոտվի, ջրային և հողմնային հողատարումից զերծ պահելու համար պահեստավորված հողաթմբերը ծածկվում են խոտաբույսերով կամ իրականացվում են այլ միջոցառումներ՝ հողաթմբերի ամրացում, ծածկում և այլն:

Մասնաշենքերի ներքին ինժեներական ցանցերի միացումը արտաքին ինժեներական ցանցերին կկատարվի մասնագիտացված շինմոնտաժային կազմակերպությունների կողմից:

Շենքերի, ավտոճանապարհների, հրապարակների և մայթերի կառուցումը կկատարվի մասնագիտացված շինմոնտաժային կազմակերպությունների կողմից:

Շինմոնտաժային աշխատանքների իրականացման տեխնոլոգիայի տեսանկյունից շինարարությունը իրականացվելու է ավանդական եղանակներով՝ կիրառելով շինարարական կազմակերպության սեփական շինարարական մեքենաները և մեխանիզմները, իսկ բացակայության դեպքում վարձակալել դրանք այլ կազմակերպություններից:

Շինարարության նյութատեխնիկական մատակարարումը նախատեսվում է շինարարական ինդուստրիայի ձեռանարկություններից և գլխավոր կապալառու կազմակերպության արտադրական բազայից: Շաղախը և բետոնը կառաքվեն Դիլիջան համայնքի մոտակա բետոնաշաղախային հանգույցներից, մասնագիտացված տրանսպորտային միջոցներով: Առաքումը ծրագրվում է այնպիսի պարբերականությամբ, որպեսզի ապահովվի աշխատանքների անընդհատությունը:

Փոխադրամիջոցների և շինարարական մեքենաների տեխնիկական սպասարկումը և լիցքավորումը իրականացվելու է շինհրապարակից դուրս մասնագիտացված կետերում: Տարածքում քսայուղեր և վառելանյութ չի պահեստավորվելու:

Շինարարության ընթացքում օգտագործվելու են հետևյալ շինարարական մեքենաները և մեխանիզմները.

Էքսկավատոր՝ 1 միավոր, բուլդոզեր՝ 1 միավոր, շարժական կոմպրեսոր՝ 1 միավոր, ավտոմոբիլային կռունկ՝ 1 միավոր, ռելսային կռունկ՝ 1 միավոր, գլդոն ՝ 1 միավոր:

Շինարարական տեխնիկայի համար համապատասխան վառելիքի լիցքավորումը և յուղումը իրականացվելու է շինհրապարակից դուրս լցակայաններում կամ սպասարկման կետերում:

Շինարարական նյութերից օգտագործվելու է ցեմենտ, մետաղական ամրաններ և այլ կոնստրուկցիաներ, ապակի, փայտ, սրբատաշ եւ կոպտատաշ քարե շար, երեսպատման նյութեր և այլն:

Բնառեսուրսներից օգտագործվելու է միայն ջուր՝ աշխատանքային հարթակի ջրցանի, հանված գրունտի և ստացվող ավազի ու խճի խոնավացման համար (675մ^3/շին. ժամ.), ինչպես նաև շինանձնակազմի խմելու-կենցաղային կարիքների համար (655 մ^3/շին. ժամ.):

Շինարարության ընթացքում ընդհանուր ջրօգտագործումը կկազմի՝ 1330 մ^3/շին. ժամ.:

Շինարարական աշխատանքների ընթացքում նախատեսված հողային աշխատանքների իրականացման ընթացքում ընդհանուր հանույթի ծավալը /հիմքերի փորման աշխատանքներ/ կազմելու է 5000մ^3, որից 4000մ^3 հողային ծավալը կտեղափոխվի Դիլիջանի համայնքապետարանի կողմից օրենքով սահմանված կարգով հատկացված վայր, իսկ մնացած մասը կարճաժամկետ կպահվի շինարարական հրապարակում և կօգտագործվի որպես հետլիցք:

Այն դեպքերում, երբ մեքենաներից և սարքավորումներից կլինի վառելիքի և/կամ քսայուղերի արտահոսք, ապա պետք է փռված ավազը կամ մանրախիճը տեղափոխել համապատասխան աղբավայր և այն փոխարինել նորով:

Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է իրականացնել տարածքի բարեկարգում և կանաչապատում, համաձայն բարեկարգման, արդիականացման և կանաչապատման նախագծի: Կանաչապատման աշխատանքներն կիրականացվեն ՀՀ կառավարության 08.02.2018թ. N108–Ն որոշման համապատասխան:

Կանաչապատումը նախատեսվում է իրականացնել տարածաշրջանին և տեղի կլիմայական պայմանների բնորոշ ծառաթփային բուսականությամբ՝ կտնկվի մոտ 220 եղևնի, թփեր և կիրականացվի 5000 քմ սիզամարգի ցանքս:

Նախատեսվող կանաչապատման աշխատանքերի համար կօգտագործվի տարածքում առկա հողի բերրի շերտը 1100 խմ ծավալով, հողի բերրի շերտը կկուտակվի տարածքում պահպանելու նպատակով: Բերրի շերտի հանումը, տեղափոխումը, պահեստավորումը և հետագա օգտագործումը իրականացվելու է համաձայն ՀՀ կառավարության 2017թ նոյեմբերի N1404 :

Նախքան ծառատնկման աշխատանքների սկսելը անհրաժեշտ է կանաչապատվող տարածքում իրականացնել հետևյալ ագրոմելիորատիվ միջոցառումները.

- ոռոգման համակարգի անցկացում, համաձայն նախագծի համարակալված ցցափայտերի օգնությամբ ծառերի ու թփերի փոսերի տեղի նշահարում, ծառերի համար 1մ խորությամբ և 50սմ լայնության փոսերի պատրաստում, թփերի համար 50-60սմ խորությամբ և 40սմ լայնության փոսերի պատրաստում, բոլոր փոսերի մոտ համարժեք ծավալի հողախառնուրդի կուտակում. պատրաստված 3 բաժին սևահողից, 1 բաժին կարմիր ավազից, 1 բաժին տորֆահողից և 0.5 բաժին փտած գոմաղբից, վրան ավելացնել մուլչ: Ագրոտեխնիկական միջոցառումների ավարտից հետո խորհուրդ է տրվում նշված տարածքում ծառատունկն իրականացնել ուշ աշնանը կամ վաղ գարնանը: Նախատեսվում է կազմակերպված ոռոգման ցանց: Ցանցում առկա են կաթիլային ոռոգմնա հանգույցներ, նաև նախատեսված են ռետինե խողովակներ ամբողջությամբ ոռոգում կազմակերպելու համար: Բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի ջրամատակարարումը և ջրահեռացումը նախատեսված է իրականացնել համաձայն «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի կողմից՝ 2022 թվականի նոյեմբերի 2-ին տրված N ՎՋ5755/2022 ջրամիացման և/կամ ջրահեռացման նախագծման տեխնիկական պայմանի:

Ջրամատակարարման նպատակով ջրագիծը նախատեսվում է միացնել տարածքի դիմացով անցնող d=100մմ պողպատե խողովակից /ջրագծում ճնշումը՝ P=4.0 մթն, իսկ ջրահեռացման նպատակով միացումը կկատարվի d=100մմ կոյուղագծին :

Շինարարական աշխատանքների ընթացքում և շահագործման փուլում էլեկտրամատակարարումը 344 ԿՎԱ հզորությամբ կիրականացվի համաձայն տեխնիկական պայմանի, որի համար լիցենզավորված կազմակերպության կողմից կիրականացվի նախագիծ: Բազմաբնակարան բնակելի շենքի էլեկտրամատակարարումն իրականացնել 1x160x1x400 ԿՎԱ հզորության ՏԵ 1525-ի 0.4կՎ վահանի 1-ին, 2-րդ հատոններից:

Բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի Գազամատակարարումը 310խմ/ժամ նախատեսվող ծախսով հնարավոր է իրականացնել Դիլիջան ԳԲԿ-ն սնող D=150մմ կողմնատար գազատարից:

Բնակելի շենքի էներգաարդյունավետությունը նախատեսվում է համապատասխանեցնել ՀՀ կառավարության 12.04.2018թ. N426-Ն որոշմամբ սահմանված չափորոշիչներին, ինչի ուղղությամբ իրականացվելու են համալիր միջոցառումներ, որոնց թվում են երեսպատման համակարգը, բարձր էներգաարդյունավետությամբ պատուհաններ և վիտրաժներ, տանիքի և ստորգետնյա հարկի ջերմամեկուսացում

Ջերմային կորուստների նվազեցման նպատակով խողովակաշարերի և օդատարների համար կիրառվում են բարձր արդյունավետության ջերմամեկուսիչներ, արտաքին կոնստրուկցիաների

ջերմամեկուսացում,օդատարների ջերմամեկուսացում ժամանակակից ջերմամեկուսիչ նյութերով, օդափոխության համակարգում բարձր արդյունավետությամբ ղեկավարվող ջերմափոխանակիչների կիրառում:

Համալիրում նախատեսվում է իրականացնել անհատական օդափոխման և ջեռուցման համակարգ որոնց արտաքին բլոկները նախատեսվում է քողարկել հատուկ դրանց համար նախատեսված խորշերում և համապատասխան ձայնամեկուսիչ նյութերի օգտագործմամաբ նախատեսվում է ապահովել աղմուկի ցածր մակարդակ:

Նախատեսված է շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունը և վնասակար ազդեցության բացառմանը, նվազեցմանն ու փոխհատուցմանն ուղղված բնապահպանական միջոցառումների ծրագիր, այդ թվում՝

- շինարարական աշխատանքներում փոշենստեցման նպատակով նախատեսվում է իրականացնել տարածքի ջրցանում տարվա շոգ և չոր եղանակներին, օրական 2-3 անգամ,
- ջրցանի ծավալները հաշվարկվում են այնպես, որ չառաջանան մակերևութային հոսքեր և ջուրը բավականացնի միայն փոշենստեցման համար,
- շինարարական նյութերի (հատկապես սորուն շինարարական նյութերի դեպքում, ինչպիսիք են ավազը, խիճը, հողը և այլն) տեղափոխումը կիրականցվի փակ ծածկով մեքենաներով,
- սորուն նյութերի պահեստները ծածկել համապատասխան բարձրությամբ թաղանթով, ինչը կանխարգելում է փոշու տարածումը,
- շինարարական նյութերը կտեղադրվեն բետոնապատ մակերեսի վրա,
- աշխատանքների ավարտից հետո կմաքրվեն բոլոր տարածքները և առաջացած թափոնները կտեղափոխվեն Դիլիջանի համայնքապետարանի կողմից հատկացված աղբավայր,
- կանաչապատման աշխատանքներն կիրականացվեն ՀՀ կառավարության 08.02.2018թ. N108–Ն որոշման համապատասխան՝ համաձայնեցված Դիլիջանի համայնքապետարանի հետ,
- կանաչապատման աշխատանքերի համար կօգտագործվի տարածքում առկա հողի բերրի շերտը 1100 խմ ծավալով, որի հանումը, պահպանումն ու օգտագործումը իրականացվելու է համաձայն ՀՀ կառավարության 2017 թվականի նոյեմբերի 2-ի N1404-Ն որոշման՝ նախապես համաձայնեցվելով Դիլիջանի համայնքապետարանի հետ,
- շինարարական աշխատանքները և տրանսպորտի տեղաշարժը կկազմակերպվի ցերեկային ժամերին,
- շինարարական աշխատանքներում կներգրավվի ժամանակակից աղմուկի առաջացման ցածր ցուցանիշներ ունեցող տեխնիկական միջոցներ, ինչպես նաև դրանք կշահագործվի տեխնիկական նորմալ վիճակում,
- պարբերաբար կստուգվի շինարարական տեխնիկայի և փոխադրամիջոցների տեխնիկական վիճակը և կիրականացվի կարգաբերումներ:

Բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում նախատեսվում է իրականացնել շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն/մեղմացմանն ուղված հետևյալ մշտադիտարկումները.

1. Մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի (փոշի, CO, NOx և այլն) արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ ամիսը մեկ հաճախականությամբ:
2. Փոշենստեցման նպատակով նախատեսվում է իրականացնել տարածքի ջրցանում տարվա շոգ և չոր եղանակներին, օրեկան 2-3 անգամ:
3. Օգտագործված մեքենայական յուղերով ու քսայուղերով հողերի հնարավոր աղտոտումից խուսափելու նպատակով հողերի աղտոտվածության մշտադիտարկումներ երեք ամիսը մեկ հաճախականությամբ:
4. Աղմուկի, թրթռումների և տատանումների մշտադիտարկումներ ամիսը մեկ հաճախականությամբ:

Բնապահպանական միջոցառումների համար նախատեսվում է ամբողջ շինարարության ընթացքում հատկացնել 1100.000 ՀՀ դրամ:

Պատճառաբանական մաս. Նախնական գնահատման և փորձաքննության փուլերում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, Դիլիջանի համայնքապետարանի վարչական շենքում անցկացված հանրային քննարկումներում գործունեության իրականացումը մասնակիցների կողմից արժանացել է հավանության: Հայտի վերաբերյալ փորձաքննական գործընթացում ստացվել են կարծիքներ՝ Առողջապահության, Արտակարգ իրավիճակների,Ներքին գործերի Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություններից, Քաղաքաշինության կոմիտեից, Կադաստրի կոմիտեից, Տավուշի մարզպետի աշխատակազմից, ինչպես նաև շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումներից: Ստացված դիտողությունները և առաջարկությունները հաշվի են առնվել Հայտի լրամշակումներում:

Ամփոփելով Հայտի բնապահպանական և սոցիալական ազդեցությունների վերլուծությունները՝ կարելի է եզրահանգել, որ նախատեսվող գործունեության իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները, որոնք առնչվում են շինարարական աշխատանքների հետ, կկրեն ժամանակավոր և տեղայնացված բնույթ և կլինեն թույլատրելի նորմայի սահմաններում: Դրանք կարող են բացառվել կամ մեղմվել գործունեության ընթացքում բնապահպանական միջոցառումների արդյունավետ իրականացմամբ:

Փորձաքննական պահանջներ

1. Բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի կառուցման ընթացքում անհրաժեշտ է պահպանել ՀՀ առողջապահության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի N 15-Ն հրամանով հաստատված «Կազմակերպություններում աշխատողների սանիտարակենցաղային սենքերի» N 2.2.8-003-12 սանիտարական կանոնների և նորմերի պահանջները:
2. Կանաչապատման աշխատանքներն իրականացնել ՀՀ կառավարության 08.02.2018թ. N108Ն որոշման համապատասխան:
3. Շինարարության ընթացքում որպես պարտադիր պահանջներ, անհրաժեշտ է՝
- շինհրապարակի արտաքին տարածքը սահմանազատել ժամանակավոր ցանկապատով, անցկացնել լուսավորություն և տեղադրել արգելափակիչ նշաններ,
- շինությունները ծածկել համապատասխան բարձրությամբ փոշու տարածումը կանխող ցանցով,
- շինհրապարակից դուրս եկող մեքենաների անվադողերը լվանալ,
- բետոնի տեղափոխումն իրականացնել Հայտում նախատեսված ձևով՝ բացառելով շինարարական հրապարակում կամ հարակից տարածքներում բետոնի արտադրությունը:
4. Շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող տարբեր տեսակի թափոնների և մնացորդային գրունտի հեռացումն ու տեղադրումն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ Դիլիջանի համայնքապետարանի հետ համաձայնեցված:
5. Տարածքի կանաչապատման աշխատանքները համաձայնեցնել Դիլիջանի համայնքապետարանի հետ և իրականացնել «Բարեկարգման, արդիականացման և կանաչապատման» նախագծի համաձայն, որպես խնամքի պարտադիր միջոցառում ապահովել կանաչ տարածքների ոռոգումը:
6. Շինարարության ընթացքում պահպանել բնապահպանական կառավարման և մշտադիտարկումների պլաններում նախատեսված միջոցառումների իրականացումը և ժամանակացույցերը:

02543163 ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ COMMISSION OF EXPERTS

7. Նախագծի վերջնական տարբերակում և շինարարական աշխատանքների ընթացքում հաշվի առնել «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի, «ՀԷՑ» ՓԲԸ-ի և «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի կողմից տրված տեխնիկական պայմանի պահանջները:
8. Նախագծի վերջնական տարբերակում հաշվի առնել ՀՀ կառավարության 12.04.2018թ. N426-Ն «Նոր կառուցվող բնակելի բազմաբնակարան շենքերում, ինչպես նաև պետական միջոցների հաշվին կառուցվող (վերակառուցվող, նորոգվող) օբյեկտներում էներգախնայողության և էներգաարդյունավետության տեխնիկական կանոնակարգը սահմանելու մասին» որոշման պահանջները:
9. ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական հաշվառման, ուսումնասիրման, պահպանության, ամրակայման, նորոգման, վերականգնման և օգտագործման կարգը հաստատելու մասին» N438 որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետի համաձայն, աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից անհրաժեշտ է դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ տեղեկացնել լիազորված մարմնին՝ համապատասխան պահպանական միջոցառումներ իրականացնելու համար:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«ՇԱՄԱԽՅԱՆ» ՍՊ ընկերության կողմից ներկայացված, Տավուշի մարզի Դիլիջան համայնքի Շամախյան 1/2 հասցեում նախատեսվող բնակելի շենքի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի առաջին կարգի մասնագետ՝ Աննա Սարգսյան